## ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Վախճանվեց Հրանտ Թամրազյանը: Քիչ է ասել հայ գրականագիտությունը, առհասարակ հայ հոգևոր կյանքը շատ բան կորցրեց: Նոր սերունդներ կգան, նոր անուններ կծագեն հայ մաքի հորիզոնում, բայց այն, ինչ կապված էր Հրանտ Թամրազյանի անվան հետ, այլևս չի կրկնվի...

Հրանտ Թամրազյանն այն համաստեղությունից էր, որ հրապարակ եկավ 1950-ական թվականներին և միանգամից տիրական դիրք գրավեց մեր գրականագիտական կյանքում: Բայց տասնյակ տաղանդավորների շարքում սեփական փայլը պահպանելու համար բացառիկ մասնագիտական օժտվածությունից բացի ինչ-որ ուրիշ բան էր պետք: Հենց այդ ուրիշ բանն էր, որ նրան դարձրեց Հրանտ Թամրազյան:

Թվարկե՞լ բոլոր այն ծառայությունները, որ մատուցել է նա հայ գրականագիտությանը, այսօր անշուշտ արժե:

Նրա երիտասարդական հետաքրքրությունների աշխարհը Շիրվանզադեն էր՝ զուսպ, խստաշունչ, բայց և տրամադրող մի աշխարհ, որն ուսումնասիրողից ևս պահանջում էր զգաստ միտք ու կշռադատ հայացք: Թամրազյանն այս ամենից բացի ուներ նաև խառնվածքի ավյուն, հոգու կրակ, եռանդ ու ոգևորություն: Եվ հրապարակ եկավ մի նոր Շիրվանզադե, որ տարբեր էր նախորդ բոլոր ուսումնասիրողների տեսածից ու ճանաչածից:

Տարիների ընթացքում Թամրազյանական այդ տարերքը պիտի ծավալվեր նորանոր ու միշտ անակնկալ ուղղություններով: Սիամանթո, Մեծարենց, Տերյան, Չարենց, Թումանյան... Տասնյակ մենագրություններ, հարյուրավոր հոդվածներ ու ուսումնասիրություններ: Շիրվանզադեի արձակի հողեղեն ճշմարտություններից դեպի պոեզիայի երկնային ոլորտները: Անհաբիր թվացող այս եզրերը գիտնականի վերլուծական զուդահեռներում ընդհանրանում են, միավորվում, մեկը մյուսին լրացնելով՝ բացահայտում դեղարվեստական իմացության այնպիսի հորիզոններ, որոնք տեսանելի էին միայն Թամրազյանական մտքին ու զգացողությանը:

Այդպես նա 60-ական թվականների սկզբին հայանագործեց մի նոր Սիամանթո. մենագրությունը կարճ միջոցում հրատարակվեց երկու անգամ: Հետո գալիս են չարենցյան անակնկալները. նոր լույսի տակ է երևում երիտասարդ Չարենցը, նորովի է ընթերցվում «Խմբապետ Շավարշը»: Մեծարենցի, Տերյանի նրբահյուս քնարական աշխարհները դեռևս չնկատված շերտեր են բաց անում թամրազյանական զարմանալի ներքնատեսության առջև:

Այսպես, մեր դասական գրականության ինչ ընագավառի էլ մերձենում էր նա, տալիս էր թարմ գաղափարներ, ձևավորում էր մտքեր հուզող նոր պատկերացումներ: Եվ ակտիվ գործունեության տասնամյակների ընթացքում թրծվում է գրականագիտական մի ոճ, որն այլևս ոչ ոքի հետ չի կարելի շփոթել:

Բայց գիտական անակնկալների շարքը շարունակվում է: Հրապարակ է գալիս «Հայ քննադատության պատմության» առաջին գիրքը: Գիտական միտքը հանկարծակիի է գալիս. պարզվում է գեռևս V դարում ունեցել ենք զարդացած քննադատական միտք: Տարակույսներ, թեր ու դեմ կարծիքներ, վեճեր: Իսկ երբ իրար հետևից լույս աշխարհ են գալիս երկրորդ, երրորդ գրքերը, գիտական միտքը համոզվում է, որ այս անդամ էլ դրականադետը հավատարիմ է մնացել ինքն իրեն. գնացել է ոչ թե տրորված ճանապարհով, այլ բացել է նոր ճանապարհ:

Թամրազյան մտածողի համար դասական մշակույթի աշխարհը միայն պատմություն չէր, այլ շարունակվող կենդանի ավանդույթ, որ բանալիներ էր տալիս նորագույն իրողությունները հասկանալու և գնահատելու համար: Եթե տեսականորեն սա միայն դրույթ էր, ապա քննադատ Թամրազյանը դրան գործող սկզբունքի կենդանի շարժում հաղորդեց: Նրա հոդվածներում ամենուրեք զգացվում է ժամանակների կապը, գրական անցյալը շարունակվում է ներկայի մեջ, ներկան իմաստավորվում է անցյալով: Այդպիսով աշխույժ միտքը, ակտիվ բնավորությունը, բանաստեղծական խառնվածքը նրան հնարավորություն են տալիս իր անհատականության անկրկնելիությունը պահպանել նաև քննադատության մեջ: Թամրազյան անհատականությունը կարող էր բանաստեղծ լինել, և այս դեպքում հայ ժամանակակից քննադատությունը շատ բան կկորցներ: Բայց եթե դարձել էր քննադատ, հայ բանաստեղծությունը միայն շահում էր նրա վառվռուն ելույթներից, սուր մտքի ճշգրիտ դիտարկումներից: Այդպիսին էր նա բանաստեղծության մեջ քննադատ, քննադատության մեջ բանաստեղծ: Քչերն են այդպես ծնվում:

Թամրազյան մտավորականի կերպարը թերի կլիներ առանց նրա բազմամյա դիտական-մանկավարժական գործունեության Երևանի պետական համալսարանում: Քանի՞ սերունդներ են անցել նրա մտավոր ու հոգևոր դաստիարակության բովով, քանի՞ քանիսն են նրա սաներից այսօր հանրապետությունում ճանաչված գիտնական, գրող, մանկավարժ, մշակութային ու հասարակական գործիչ: Նրանցից յուրաքանչյուրի մեջ մի մասնիկ է մնացել իրենց ուսուցչի էությունից: Եվ մի՞թե դա մարդու հարատևության իսկական դրավականը չէ: Հրանտ Թամրազյանի գործը

*շարունակող այդ հարյուրավորները դեռ շատ տասնամյակներ կենդանի կպահեն նրա դիտական ու մարդկային կերպարը:*

*Եվ սա միայն պատշաճության խոսք չէ, որ սովորաբար ասվում է նոր հեռացածի թաղմ հիշատակին: Մենք նրա սաներից յուրաքանչյուրս, ամեն քայլափոխի զգացել ենք նրա պահանջկոտ ու հոգատար հետաքրքրության ջերմությունը՝ ուսանողական նստարանից մինչև դիտական աստիճաններով տիտղոսավորված տարիքը: Նա ուսուցիչ էր բառի ազնվական իմաստով: Ուսանողին կարողանում էր ոգևորել գիտելիքների ծարավով, ասպիրանտը նրա ղեկավարությամբ գտնում էր իր որոնումների ճիշտ ճանապարհը, գիտության ավելի բարձրերը ձգտողների համար անփոխարինելի խորհրդատու բարեկամ էր: Մեր սերունդը բախտավոր պիտի համարի իրեն, որ եղել է նրա ժամանակակիցը, աշակերտել է նրան, նրա հետ աշխատել է համալսարանական նույն հարկի տակ: Մայր բուհը դեռ երկար ժամանակ է զգալու նրա բացակայությունը:*

*Թամրազյան գիտնականը լավ գիտեր նաև մարդ ու քաղաքացի լինելու արվեստը, որը նրա մոտ ոչ թե ձեռքբերովի, այլ ընածին էր: Դրա մեջ էր նրա անհատականության հմայքը: Զկար որևէ խնդիր, որի կողքով անտարբեր անցներ նա: Եվ արձագանքը միշտ բուռն էր, ազնիվ շահադրգռության կրակով լի:*

*Այլ էր Թամրազյան անհատը իր սիրած ընկերական հավաքույթներում: Ուր լինում էր նա, մթնոլորտը լցվում էր գրավիչ խոսք ու զրույցով, գիտական ասուլիսները ջերմանում էին նրա հարուստ ու վառ անհատականությունից բխող անբացատրելի թռվչություններով:*

*Այդպիսին էր նա իր ապրած կյանքում, այդպիսին էլ կմնա, քանի դեռ կա գրականությունը, քանի դեռ զգացվելու է գրականության մասին դիտության կարիքը:*

ԼԱՐԻՍԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ